ԿԱՐԾԻՔ

Քրիստինե Աշոտի Սարգսյանի «Մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառումը գործարարական անգլերենի փոխներգործուն ուսուցման գործընթացում» թեմայով մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Ժամանակակից կրթական միջավայրում մեդիատեխնոլոգիաները դարձել են անբաժան բաղադրիչ ուսուցման բոլոր մակարդակներում, հատկապես օտար լեզուների ուսուցման ոլորտում: Գործարարական անգլերենի ուսուցման պարագայում մեդիատեխնոլոգիաների կիրառությունը հնարավորություն է տալիս ոչ միայն զարգացնելու լեզվական հմտությունները, այլև ձևավորելու մասնագիտական հաղորդակցական կարողություններ, որոնք անհրաժեշտ են գործարար միջավայրում արդյունավետ հաղորդակցման համար:

Մեդիատեխնոլոգիաները խթանում են ուսանողների ինքնուրույն աշխատանքը տարբեր հավելվածներ և առցանց գործիքներ (օր. Grammarly, Quizlet, Kahoot) նպաստում են ինքնակառավարվող ուսուցման հմտությունների ձևավորմանը:

Կարևոր է նաև, որ մեդիատեխնոլոգիաների արդյունավետ կիրառումը պահանջում է ուսուցիչների մեդիագրագիտության բարձր մակարդակ: Ուսուցիչը պետք է կարողանա համադրել ավանդական մեթոդները և թվային գործիքները՝ ստեղծելով համադրված ուսուցման միջավայր (blended learning), որը խթանում է ուսանողների ներգրավվածությունը և մոտիվացիան:

Մեդիատեխնոլոգիաները գործարարական անգլերենի ուսուցման մեջ ոչ միայն գործիք են, այլ նաև ուսուցման նոր փիլիսոփայություն, որը միավորում է լեզվական, մշակութային և հաղորդակցական բաղադրիչները՝ նպաստելով մասնագիտական և միջմշակութային կոմպետենցիաների ձևավորմանը:

Ատենախոսական հետազոտության թեման արդիական է և խիստ կարևոր:

Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է գործարարական անգլերենի ուսուցման գործընթացում մուլտիմեդիա տեխնոլոգիան բավարար չափով ներդրված չլինելու փաստով, նաև սովորողների մասնագիտական և հաղորդակցական կարողունակությունների ձևավորման և զարգացման անհրաժեշտությամբ:

Ատենախոսը հստակորեն հատկորոշում է նաև հետազոտության գիտական նորույթը.

1. ուսումնասիրվել և վերլուծվել են հիմնախնդրի վերաբերյալ առկա տեսություններն ու հայեցակարգային մոտեցումները, որոնց հիման վրա հիմնավորվել են մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառման հնարավորությունները գործարարական անգլերենի դասընթացում,

2. ըստ մուլտիմեդիա տեխնոլոգիայի սկզբունքների մշակվել է վարժությունների համակարգ,

3. հստակեցվել են մուլտիմեդիա տեխնոլոգիայով սովորող ուսանողների կարողունակությունների գնահատման չափանիշները,

4. մշակվել է մուլտիմեդիալ տեքստի, գերտեքստի, տեսանյութերի, վավերագրական և գեղարվեստական ֆիլմերի ընտրության և ուսուցման մեթոդական համակարգ,

5. մշակվել և առաջարկվել է մուլտիմեդիա տեխնոլոգիայով ստեղծած անգլերենի ուսուցման մոդելը, որը ներառում է ուսուցման ավանդական և այլընտրանքային մեթոդները, մուլտիմեդիա վարժությունները, մուլտիմեդիա սկզբունքները, մուլտիմեդիա հնարները, մուլտիմեդիա միջոցները,

6. հիմնավորվել է համապատասխան փորձարարական ուսուցման ընթացքում և արդյունքում մշակված մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառմամբ գործարարական անգլերենի փոխներգործուն ուսուցման մեթոդական համակարգի և ստեղծված մոդելի արդյունավետությունը:

Ատենախոսի նպատակն է եղել մշակել և Հ Հ բաձրագույն կրթության ոլորտում դասավանդվող գործարարական անգլերենի դասընթացում ներդնել մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառմամբ անգլերենի փոխներգործուն ուսուցման մեթոդական համակարգ և մուլտիմեդիա տեխնոլոգիայով ստեղծված անգլերենի ուսուցման մոդել:

Հիշյալ նպատակին ատենախոսը հասել է լուծելով հետևյալ խնդիրները.

1. ուսումնասիրել և վերլուծել հիմնախնդրի վերաբերյալ առկա տեսություններն ու հայեցակարգային մոտեցումները, որոնց հիման վրա հիմնավորվել են մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառման հնարավորությունները գործարարական անգլերենի դասընթացում,
2. բացահայտել և բնութագրել են մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառման առանձնահատկություններն ու սկզբունքները բուհերում,
3. բացահայտել ՏՀՏ-ների միջոցով գործարարական անգլերենի դասընթացի արդյունավետության բարձրացման հնարավորությունները,

4. հիմնավորել մուլտիմեդիա տեխնոլոգիայի միջոցով ՀՀ գործարարական անգլերենի փոխներգործուն ուսուցման անհրաժեշտությունը,
5. մշակել մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառմամբ գործարարական անգլերենի փոխներգործուն ուսուցման մեթոդական համակարգ,
6. մշակել մուլտիմեդիա տեխնոլոգիայով ստեղծված գործարարական անգլերենի ուսուցման մոդել, որը լիարժեքորեն կապահովի ուսանողների լեզվանյութը յուրացնելու արդյունավետությունը,
7. համապատասխան փորձարարական ուսուցման ընթացքում հիմնավորել մշակված մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառմամբ գործարարական անգլերենի փոխներգործուն ուսուցման մեթոդական համակարգի և ստեղծված մոդելի արդյունավետությունը:

Ատենախոսությունը, քննարկվող խնդիրներով պայմանավորված, բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, օգտագործած գրականության ցանկից և հավելվածից: Այն պարունակում է 9 գծապատկեր, 1 աղյուսակ, 5 տրամագիր,1 նկար: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է 151 համակարգչային էջ:

Ներածության մեջ հիմնավորվել է հետազոտության արդիականությունը, սահմանվել են ատենախոսության նպատակը, գիտական վարկածը, խնդիրները, հետազոտության օբյեկտը, առարկան, մեթոդական հիմքերը, ներկայացվել են հետազոտության փուլերը, շարադրվել են գիտական նորույթը, աշխատանքի տեսական ու գործնական նշանակությունը, ինչպես նաև պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

Առաջին գլուխում «Մուլտիմեդիա տեխնոլոգիայի բովանդակությունը, ներդրման տեսությունը և պրակտիկան», ներկայացված են կրթության ոլորտում թվային հաղորդակցության ու համացանցի օգտագործման, էլեկտրոնային ուսուցման նորագույն տեխնոլոգիաների միջոցով գիտելիքի փոխանցման փուլերը: Դիտարկված և վերլուծված են մուլտիմեդիա տեխնոլոգիայի բովանդակությունը, կիրառման ոլորտը:

Գիտական փաստարկներով հիմնավորվում է, որ մուլտիմեդիա տեխնոլոգիան ապահովում է ուսուցման կառավարման համակարգի (Learning Managerial Systems) ծրագրային գործառնությունը: Բնութագրված են էլեկտրոնային ուսուցման գործիքները: Հիմնավորվում է, որ LMS-ները կենտրոնացած են ուսուցման առցանց ծառայություններ մատուցելու գործընթացի վրա: Նրանք հանդես են գալիս որպես առցանց բովանդակությամբ հարթակ տարբեր դասընթացներ կազմակերպելու համար, ներառյալ տարժամանակյա /ասինխրոն/, թե համաժամանակյա /սինխրոն/ դասընթացները: Նշվում է որ մուլտիմեդիա տեխնոլոգիայի առաջ

գալով դասավանդման մեթոդներում սահուն կերպով անցում կատարվեց նորագույն մի հարացույցի, որտեղ նորագույն այդ մեթոդներն այլևս համահունչ չէին հնառճ վիրտուալ մեթոդներին:

Տրվում է ավանդական և ժամանակակից ուսուցման մեթոդների բնութագրումը, կարևորվում է լեզվի դասավանդման հաղորդակցական մոտեցումը որպես ուսուցման միջոց և որպես նպատակ:

Երկրորդ գլուխը նվիրված է մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառման առանձնահատկություններին գործարարական անգլերենի դասընթացում:

Ատենախոսության մեջ քննության են առնվում տեսանյութերի ընտրության տեսակները, չափանիշներն ու սկզբունքները՝ հաշվի առնելով գործարարական անգլերենի դասընթացի առանձնահատկությունները:

Հեղինակը, խոսելով մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառման առանձնահատկությունների մասին, գործարարական անգլերենի դասընթացում համարում է պատմվածքը և TED դասախոսությունները մուլտիմեդիա տեխնոլոգիայի կարևոր բաղադրիչներից մեկը: Նշվում է որ թվային պատմվածքը մանկավարժական այն նորագույն մեթոդներից է, որը ներգրավում է ուսանողներին խորը և իմաստալից ուսումնառության գործընթացի մեջ:

ԵՊՏՀ Ֆինանսական, մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման, ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետներում իրականացվել է փորձարարական ուսուցում, որի նպատակն է եղել ուսանողներին ծանոթացնել թվային պատմվածքի ստեղծման ընթացակարգերի հետ, յուրացնել նրա ստեղծման մեխանիզմները, շարունակաբար ընդլայնելով մուլտիմեդիա միջոցների կիրառման սահմանները:

Աշխատանքում նաև դիտարկվել է և հիմնավորվել է մուլտիմեդիա նախագծի կիրառման առանձնահատկությունները գործարարական անգլերենի դասընթացում:

Սահմանված են մուլտիմեդիա նախագիծը, ինչպես նաև տեղեկատվական, հետազոտական, ստեղծագործական, խաղային նախագծերի կիրառման առանձնահատկությունները գործարարական անգլերենի դասընթացում:

Սահմանված են մուլտիմեդիա նախագիծը, ինչպես նաև տեղեկատվական, հետազոտական, ստեղծագործական, խաղային նախագծերի կիրառման առանձնահատկությունները գործարարական անգլերենի դասընթացում:

Ներկայացված են մուլտիմեդիա նախագծի գործառական և բովանդակային բնութագրերը: Հիմնավորվում է այն գաղափարը, որ նախագծային մեթոդը կիրառելով գործարարական անգլերենի դասընթացում ուսանողները զարգացնում են ոչ միայն իրենց օտարալեզու հաղորդակցական կարողունակությունները, այլև մասնագիտական կարողունակությունը (կոմպետենտությունը) և ինքնուրույն աշխատանքի մշակույթը: Բնութագրված են մուլտիմեդիա նախագծի գործառույթները գործարարական անգլերենի դասընթացում և դրանց իրականացման գործոնները:

Աշխատանքում ներկայացված է գործարարական անգլերենի դասընթացում մուլտիմեդիա տեխնոլոգիայի կիրառման արդյունավետ մոդելը, տրվում է գործարարական անգլերենի ուսուցման մշակված մոդելի բովանդակությունը: Բնութագրված են նրա կառուցվածքային բաղադրիչները՝ ավանդական և այլընտրանքային մեթոդները, մուլտիմեդիա վարժությունները, մուլտիմեդիա տեխնոլոգիայի սկզբունքները, մուլտիմեդիա հնարները, մուլտիմեդիա միջոցները:

Ատենախոսը առաջարկվող մոդելում կարևորում է ուսուցման այլընտրանքային փոխներգործուն մեթոդները, մասնավորապես մուլտիմեդիա տեխնոլոգիայի շրջանակներում ձևավորված մեթոդները: Այդ առումով առանձնանում է թեմատիկ «ընկղման», մուլտիմեդիա էքսկուրսիա, մուլտիմեդիալ դասախոսության, մուլտիմեդիալ գործնական աշխատանքի, նախագծային մեթոդները: Ներկայացված և բնութագրված են նաև ստեղծագործական, հաղորդակցման մեթոդները:

Դրական գնահատելով Քրիստինե Սարգսյանի ատենախոսությունը՝ այնուամենայնիվ, կցանկանայինք մի քանի դիտարկում անել:

1. Ատենախոսության մեջ մանրամասն ներկայացված են տեսական դրույթներ, սակայն դրանք միշտ չեն հիմնավորվում գործնական ապացույցներով:
2. Ատենախոսության հեղինակը փորձում է առաջարկել վարժությունների համակարգ, սակայն կապակցված խոսքի զարգացման վարժությունները շատ քիչ են:
3. Ատենախոսը նկարագրում է ուսումնական նախագծի վրա աշխատանքի փուլերը՝ մանրամասնորեն անդրադարձնալով տեսական կողմին, սակայն փաստացի օրինակները բացակայում են: Կարծում ենք ավելի նպատակահարմար կլիներ առաջարկել հավելվածում նախագծերի թեմաներ գործարարական անգլերենի համար և օգտագործել

փաստացի օրինակներ՝ մեդիա տեխնոլոգիաների հետ աշխատանքը ցուցադրելու համար::

4. Թվային պատմվածքի վրա աշխատելիս անհրաժեշտ ենք համարում նշել, թե որն էր լեզվի, խոսքի և հաղորդակցական վարժությունների համակարգը:
5. Ցանկալի կլիներ ատենախոսության մեջ ընդլայնել վարժությունների ներկապնակը՝ տալով վարժությունների տեսական-մեթոդաբանական հիմնավորումը և համապատասխան դասակարգումը:

Այդուհանդերձ, նշված դիտողությունները չեն ստվերում աշխատանքի կարևորությունն ու արժեքը: Դրանք պայմանավորված են աշխատանքն ավելի կատարյալ տեսնելու ցանկությամբ:

Սեղմագիրը և հրատարակված հոդվածներն արտացոլում են ատենախոսության հիմնական բովանդակությունը:

Ասվածը հիմք է տալիս հավաստելու, որ Քրիստինե Աշոտի Սարգսյանի ատենախոսությունը բավարարում է ՀՀ ԲԿԳԿ կողմից գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակը արժանի է ԺԳ.00.02 «Դասավանդման և դաստիարակության մեթոդիկա» (անգլերեն լեզու) մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝ բ.գ.թ., մ.գ.դ., պրոֆ.պ/կ Դալյան Ն. Ե.

Պրոֆ.պ/կ Ն.Ե. Դալյանի ստորագրությունը հաստատում եմ՝
Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտքարտուղար՝ մ.գ.թ., դոցենտ Ա.Ա. Խաչիրյան